ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՕՐԵՆՍԳԻՐՔ

Հոդված 89. Դատապարտյալի կրթությունը

1. ~~Ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպելու համար: Դատապարտյալի կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:~~

«Ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի բարձրագույն կրթությունը և ուսուցումը«Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի դրույթներին համապատասխանկազմակերպելու համար: Դատապարտյալի կրթությունը և մասնագիտական ուսուցումը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:»:

2. Ուսանող դատապարտյալը քննություններ հանձնելու կապակցությամբ աշխատանքից ազատվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Ազատազրկման ձևով պատիժ կրող այն դատապարտյալներին, որոնց պատժի կրման ավարտին մնացել է վեց ամիս, ուղղիչ հիմնարկի վարչակազմը, իսկ այլընտրանքային պատիժ կրող դատապարտյալների դեպքում՝ Պրոբացիայի պետական ծառայությունը, գրավոր և անհատապես ծանուցում է ամենամյա ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու իրենց իրավունքի մասին և ներկայացնում «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված մասնագիտական ուսուցման ծրագրերը: Դատապարտյալի կողմից մասնագիտական ուսուցման ծրագրերում ընդգրկվելու ցանկություն հայտնելու դեպքում ուղղիչ հիմնարկի վարչակազմը, իսկ այլընտրանքային պատիժ կրող դատապարտյալների դեպքում՝ Պրոբացիայի պետական ծառայությունը, դատապարտյալների տվյալները փոխանցում է օրենքով սահմանված լիազորված մարմին՝ զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի շրջանակներում կազմակերպվող մասնագիտական ուսուցման ծրագրերում նրանց ընդգրկելու նպատակով:

(89-րդ հոդվածը լրաց. 16.12.16 ՀՕ-229-Ն)